



ԲԱՐՈՅՔԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԵԿԱՆ, ԱՐՈՒԵՍՏԳԻՏԱԿԱՆ

ԺԳ. ՅԱՐԻ 1899

Յարինակ 10 ֆր. ոսկի — 4 յր.:
Վեցամսեայ՝ 6 ֆր. ոսկի — 2 յր. 50 ֆ.:
Մեկ թիւ կ'արժէ 1 ֆր. — 50 ֆ.:

Թիւ 1, ՅՈՒՆՈՒՐ

ՊԱՏՄԱԿԱՆ

ՊԱՐԱԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՐԱՆՆԵՐԻ ՆԵՐՈՆ ՆՆԵՆԱԿԱՆ
ՆԵՐԿԱՆ ՆԵՐԿԱՆ



այսին է պատմութիւնից,
որ ի՛նչ մի պատմական
ազգայնական մեծ ազգե-
ցութիւն չէ՝ ունեցել չայերի
վրայ, այնքան սերտ միջա-
մտութիւն չէ գործել նրանց՝
մինչև անգամ ընտանեկան
գործերի մէջ, որքան Պարս-
կաստանը, Դեռ ամենահին
պատմական ժամանակներում,

Պարսկները մեծ գեր են խաղացել Հայ պատ-
մութեան մէջ: Մենք գիտենք, որ Հայաս-
տանը դեռ թագաւորական իշխանութիւն ու-
նենալուց յօռա՛լ՝ տարեկան իրբն հարկ վճա-
րում էր Պարսկաստանին 20.000 երկվար: Մեր
Ուրշակունի հարստութեան հիմնադիրը, այդ
փառաւոր թագաւորութեան նախահայրը, որ
այնքան երկար ժամանակ իշխեց Հայաստանում,

միտքով՝ Վաղարշակ՝ — Պարսից թագաւորի
եղբայրն էր: Բանի որ Պարսկաստանի մէջ տի-
րում էր Հայաստանի թագաւորների ազգական
ցեղը, այդ տերութիւնները միմեանց հետ հաշտ
էին եւ միմեանց օգնում էին, բայց երբ Պարս-
կաստանում սկսեց տիրել Սասանեան ցեղը,
օրինակ՝ Հայոց Խոսրով թագաւորի ժամանակ,
Հայաստանը փախտականներին եւ հալածա-
կաններին իրբն ապաստարան էր ծառայում:
Այդ երկու երկրների մէջ փոխադարձ յարա-
բերութիւնները դիւրացնում էր եւ այն հան-
գամանքը, որ երկուսն էւս համակրօն էին, բայց
երբ Հայաստանն ընդունեց քրիստոնէութիւնը,
այն ժամանակ խարութիւնը մեծացաւ եւ հետ-
զհետէ մինչև յայտնի թշնամութեան հասաւ,
որի արգասիքն քաջ Վարդանի եւ իր ընկեր-
ների անմահ գործն եղաւ, երբ նրանք մայրենի
եկեղեցու եւ հօրի համար նահատակուեցան:
Ի հարկէ այդպիսի մեծ յարաբերու-
թիւնները չէին կարող առանց մեծ ազդեցու-
թեան մնալ Հայկական գրականութեան, լեզուի
եւ առհասարակ ազգային բնաւորութեան վրայ:
Դեռ քանի որ Հայկական տառերը չէին գտա-
նուած, Հայաստանի շատ տեղերում պարսկա-
կան գրերն էին գործածուած, Հայոց շատուած-
ների շատերը Պարսից շատուածներն էին:
Դեռ մինչև այսօր էւս զանազան սովորութիւն-
ների եւ աւանդների մէջ հեթանոս Պարսկների
հետքը մնացել է Հայոց մէջ: Եւ հառեւել եմ
մեր լեզուի մէջ մի եւ նոյն ուղղագրութիւնը,

նշանակութիւնն ունեցող մաս երկու հարիւր պարսիկ բառեր, զոր օրինակ՝ կնիգ, սուգ, հազար, ճրագ, բրինձ, ձար, մարդ, դուխա, զրախ, խորտիկ, բազան, ակահ(ներհուն), նիսպ, քէշ, յաշա, նհանգ, բախա, ձեա, խազմ, պարասաակ, դեւ, պանիր, թագ, գոհար, գպիր, նկար, խմոր, (Տ)ամբար, կանոն, շտապ, թնիր, հուր, տապար, բարակ, զոր, փաշաման են։ Ահա ինչ է առու՝ գերմանացի գիտնական կարլ Ռիտտեր իր հռչակաւոր երկրագիտութեան գրքի մէջ։

«Կան Սասանեանք, Զբաղաւոր վարդապետութիւնք, ինչպէս եւ մոգութիւնք՝ առանց ազդեցութեան շմոցին հայկական գրականութեան վրայ, եւ գրա համար այն ժամանակուայ պարսկական գրութեան անհետանալուց յետոյ (Օմար տիրապետութեան ժամանակ), հայ ձեռագիրներէ մէջ ձեռքեւ է շատ բան, որ ըստ է ստիւում այդ շրջանի եւ գրականութեան վրայ։ Երբ Հայաստանի՝ աւելի անկախ Արշակունեաց թագաւորութիւնը ոչնչացաւ եւ Պարսկաստանի հոգեց աքսորաւան Արշակունի իշխանները ապստամբեցին Սասանեանք, որպէս զի այդ երկրից՝ իրանց երջանիկ հակառակորդներին յափշտակուած դահիճ լըսոյից դուրս լինեն, այդ միջոցին Սասանեանք՝ մագերի միջոցով պիտեցին քարոզել հաւատափոխութիւն։ Եւ այդ մի ժամանակու օրինակ եւ յաղորդութիւն պիտի դառնար մահմեդական Արաբներէ ձեռքում, որոնք յաղորդեցին նրանք։ Այդ ժամանակ Հաւսթ թագաւորը կամեցաւ թիբի զորութեան մոցնել Հայաստանի մէջ մագութիւնը կամ մագդեղան օրէնքը։ Սասանեանք շատերին գործին, չնայելով որ քրիստոնեայ հեղինակները մագերի դէմ առաօնիկ հակառակական գրուածներ էին տարածում, զոր օրինակ՝ գիտնական հայ հոգեւորականները — Նելիկ, Արման, Արծրունի եւ այլք։ Արաբան զորավարի Պարսից դէմ ունեցած պատերազմի պատմութեան մէջ, որ նկարագրել է Ե. դարի կիսում Նելիէ Վարդապետը, մի պատմութիւն որ պարունակում է իր մէջ Հայերի հերոսական պատերազմի եւ հաստատումութիւնը, որոնց՝ ուսով կամեցում էին բռնադատել՝ Յիսուսի Վարդապետութիւնը Զբաղաւոր հրապարտութեան հետ փոխանակել։ այդ պատմութեան մէջ պահանջուել է Հայաստանի պարսիկ մարդկանի վեհմիջոցներին հրամանը, որ յարգուում է հայ քրիստոնեաներին Զբաղաւոր կրօնի ընդունելու։ Եւ որի մէջ բացատրուած է այդ կրօնի վարդապետութիւնը։ Եւ որովհետեւ զայս վարդապետութիւնը շատ հրապարակ էր, լինան զի ուրախման հետ կապուած էին շատ քաղաքական արտօնութիւններ, ուստի եւ, ինչպէս տեսնուում է Զապուհ Բ. ի Արշակի հետ ունեցած կռուի պատմութիւնից, որ պատահեց Դ. դարու ուրախում, Հայաստանի արաբներ իշխանացունենքն որոցով Մեհրուտանի եւ Արծրունիների միջոցով, եւ Վահան Մամիկոն։

* Այս ամբողջ վրայ այսօր բաւական այլազան խորհրդածուի։

Նեանի ձեռքով, ուրախին քրիստոնեութիւնն եւ Հայաստանի երկրների վրայ հրամանատար կարգուեցին Սասանեանք տիրապետութեան ժամանակ։ Առաջինը ստացաւ Վասպուրականը, մի մեծ գաւառ, որ բնկնում է Վանայ լճի հարաւում, մինչ Երասխը եւ Ուրմիի ծովանի եզրերը՝ Արարատականում, երկրորդը՝ գարձաւ զօրապետ կամ հրամանատար Հայաստանին։ Այն ժամանակ քրիստոնեութեան եւ հայ ազգի դէմ սատելութեանը լցուած Մեհրուտանը՝ Պարսից թագաւորի մի հրամանը հրատարակեց Հայաստանի մէջ, որով արգելուում էր կարգաւ հայերէն եւ յունարէն լեզուներով գրուած գրքերը։ Եւ որպէս զի աւելի շուտով իր նպատակին հասնի, նա 381 թվաին հրամայեց բոլոր այդ գրքերը հրդ ճարտի տալ։

«Այդ էր Հայաստանի վիճակը, որն ի նկատի ունի ժամանակակից Ամմարսուր, երբ նա խօսում է Հայաստանի մեծ մասի, կամ իր խօսքով՝ այն երկրի մասին, որ Մարաստանի դէմ սահման եւ պատուար է։ որն Արասայտի հետ, Եփրատոս կայսեր ամօթայի հայտնութեան շնորհիւ, շատով ընկաւ Սասանեանք, կամ ինչպէս ինքն առում է Պարսիկների իշխանութեան ներքայ (Amm. Marc. XXV. 7, 12). Unde postea contigit, ut vivus caperetur Arsaces, et Armeniae maximum latus Medis conterminans, et Artaxata inter dissensionem et turbamentum raperent Parthii.) Սակայն պետք է զանազանել այդ բանութեան նուաճուած ամբողջ Հայաստանի մեծ կէտը, այսինքն արեւելեան Հայաստանը, որին պատմագիրները Պարսկա-Հայաստան անունն են տալիս, մի եւ նոյն անունով այն փոքր գաւառից, որն մինչեւ այսօր եւս նմանապէս կոչուում է Պարսկա-Հայաստան, որովհետեւ այդ անունը նա կոչուում է Մամիկոն խորհրդով աշխարհագրութեան մէջ Գերոյզ գաւառ, Armenia Persica, որ բնկնում է Կարսի եւ Արդւի պատմական մէջ, եւ որտեղ գտնուում են հռչակաւոր Հէր եւ Զարեանդ գաւառները, որոնց գլխաւոր քաղաքն է այսօր Սալմասկամ Սաղմասկ։

Միեւնոյն աշխարհագիրը, խօսելով Հայկական լեզուի մասին, առում է.

«Հայաստանի հին ժողովրդական երգերն իրենց ծագման մէջ խիստ յարաբերութիւն եւ ազգականութիւն ունին ի հնումն հռչակուած Պարսիկ ֆորգուի Հահմանի երգերի հետ։»

Այս կարճաւոր բացատրութիւնը տալուց յետոյ հին Պարսկաստանի՝ Հայաստանի վրայ ունեցած ազդեցութեան մասին, դառնանք մեր բուն նպատակին, այն է տեսնելը թէ այն Հայերը, որոնք այսօր բնակուում են Պարսկաստանի զանազան քաղաքներում, որտեղից յառաջ եկան. կամ բացատրելը այժմեան Պարսկահայոց ծագումը։ Սակայն Պարսկահայ տեսնելով չպետք է հասկանալ հին Հայաստանի այն մասը, որ նորինացու աշխարհագրութեան 9րդ

1 Die Erdkunde von Karl Ritter, 10. Theil, Bd. VII. Berlin 1843. Drittes Buch, West-Asien.

գաւառն է եւ պարունակում է իր մէջ այժմեան Ատրպատական գիււառը. մեր խօսքն այն է շայերի մասին է, որ իրենց բնակութիւնը հաստատել են բուն Պարսկաստանի կամ Արագստանի մէջ, գլխաւորապէս Սպահան, Համասան, Շիրակ, Քեհերթան եւ այլ քաղաքներում, եւ որոնց ծագումն աւելի մօտ գաղթականութեան արդիւնք է։ Այդ շայերը գաղթեցին Հայաստանից Պարսկաստան 17րդ դարում՝ մեծն Շահաբբասի թագաւորութեան ժամանակ եւ նրա բունակալ հրամանով, մինչդեռ Ատրպատականի կամ բուն Պարսկաստանի մէջ գտնուած շայերը շատ հին ժամանակից ի վեր բնակուել են այդ երկրում, եւ ամբողջ դարերի ընթացքում ենթակայ են եղել շատ աղէտքների եւ տառապանքի։ Ատրպատականի մէջ եղած քաղաքները — Դաւրէթ, Մարաղ, Ռուֆա, խոյ, Մարաղա, Սալմա դեռ պատմական ամենահին ժամանակում յայտնի են եղել իրեն բազմամարդ Հայ քաղաքներ. այսպէս գիտենք, որ Քրիստոսի երկրտասան աւաքեալներից միւր Յուդա կամ Թադէոս՝ Հայաստան եկաւ եւ այդտեղ մեռնելով, թաղուեց Ուրփ քաղաքում, ծն. դարում՝ Լէնկթիմարի արշաւանից յետոյ, երբ յայտնուեց բունակալ Յուսուփ ամիրան, որ Հայաստանը արեան ծով դարձրեց, թովմաս Մեծորեցի ականատես պատմագրի վկայութեան համեմատ, Ատրպատականում շայերի մեծ բազմութիւն կոտորուեց, օրինակ՝ 1425 թուին Յուսուփի որդի Աբանաթը՝ առնելով Ուրփ քաղաքը, որի բնակիչները կետից աւելի Հայ էին, նոյն թովմաս Մեծորեցու ասելով, կոտորեց բոլոր շայերին եւ ոչ մի հասն թողեց, բաց ի մանուկներից եւ աղջկներից։ Ատրպատականի մէջ գտնուած շայերի շատութեան մի օրինշ ապացոյցն էս այն է, որ երբ ծ.Գ. Գարում, 1333 թուին, Յովհան Գանեգի կողմած վարդապետ Հաստատեց Ռոնիտորների կարգը, որ այնքան շփոթութիւնների պատճառ դարձաւ, որ շայ կարգին պատկանող վարդապետներն իրանց վարդապետութեան քարոզութեան համար իրեն կենդրոն ընտրեցին Դաւրէթ, Մարաղա, Սուլթանիյէ քաղաքները Դաիթիւնանի հետ։

Սուլթանիյէ եւ Ռէյ քաղաքների վրայ փոքր ինչ աւելի պէտք է կանգ առնենք։ Չգիտենք, ինչ հիման վրայ մի քանի պատմագիրներն ասում են, որ իւր հին ժամանակներում Հայաստանի վերջին թագաւորներն իրանց պալատն այդտեղ էին պահում, եւ այդ ժամանակ 400

կնիղեցիներից աւելի կար այդ քաղաքում, եւ թէ այդ կնիղեցիների աւերակներն մինչեւ այժմ տեսնուած են։

Այստեղ յառաջ կը բերենք երկու վատահելի ճանապարհորդների կարծիքները Սուլթանիյէի մասին։ Շարդեն, իր գրքի Գ. հատրի մէջ գրում է։

“Սուլթանիյէ քաղաքը շինուած է մի լեռան ստորոտում։ Հեռուից շատ գեղեցիկ է երեւում, բայց մօտիկից ոչ։ Մի քանի հասարակական մեծ շինութիւններ կան՝ ճարտարապետութեան եւ քանդակագործութեան տեսակէտից. նա 8000 տուն ունի։ Բնիկներն ասում են, որ այդ քաղաքը յառաջ կէս մղոն տեղ էր բռնում, դէպ ի արեւմուտք, եւ այն կնիղեցիները, մկիթները, այտաւրակները, որոնց աւերակները տեսնուած են այդ կողմում՝ այդ քաղաքի մասն էին կազմում։ Այդ կարող է ճշմարիտ լինել, որովհետեւ Պարսից պատմագիրները հաւատացնում են, որ Սուլթանիյէն աւերութեան ամենամեծ մայրաքաղաքն էր, եւ աշխարհում շատ քիչ քաղաքներ կան, որոնք այդքան շատ աւերակներ ունենան։

“Պարսկաստանի պատմագիրներից ամենք ասում են, որ այդ քաղաքը Պարթևների ամենահին քաղաքներից մինն է, եւ նրա հիմնադիրն այնպա է։ Ռիշիշներն ասում են ընդհակառակն՝ որ առաջին հիմքն ձգուեց Արիւծի իշխանութեան ժամանակ, երբն իսանի հրամանով եւ թագաւորութեան ժամանակ, որ Հալաբու իսանի թիւուն էր, եւ օրովհետեւ քաղաքի շինութիւնը չվերջացաւ նրա կենդանութեամբ, նրա որդի Եսնգու Սուլթանը աւարտեց շինութիւնը ծ.Գ. դարի սկզբում, եւ կռեց Սուլթանիյէ, այսինքն արքայական քաղաք։ Սակայն ես լսեցի շատ տեղեակ անկերից, որ այդ քաղաքը Սուլթանիյէ անունն սկսել է կրել միայն այն օրից՝ երբ Պարսկաստանի վերջին թագաւորները, որոնք նոյնպէս Սուլթան էին կոչուած, իրանց բնակութիւնը հաստատեցին այդտեղ։ Հաճաբբաս Մեծն փոխադրեց մայրաքաղաքն այդ տեղից Սպահան ծ.Ձ. դարի վերջում։

“Եւրոպայի այժմեան մի քանի հեղինակներ համարակի կերպով պնդում են, որ Սուլթանիյէն կառուցուել է Տիգրանիւրի աւերակներից. եթէ այդ ճիշդ է, արեւմե կարելի է ասել, որ այժմեան ամենք կազմուել է իր հին անունից. իբր՝ հին պարսկերէն նշանակում է Իպու. Տիգրանիւր նշանակում է Տիգրանի քաղաք, օրն, ինչպէս ամեն մարդ գիտէ, Հայաստանի թագաւորն էր։ Սակայն ես չգիտեմ, ինչպէս Սուլթանիյէն կարելի է Տիգրանիւր անդ անդ ընդունել։ Տակիտոսը ասում է, որ Տիգրանակերտը Նիգրեց (Մծբին) 37 մղոն հեռու էր, իսկ այդ քաղաքը գտնուած է Միլադաքսում, Տիգրիս գետի վրայ՝ Նիւուելեց 35 մղոն հեռու։

“Սուլթանիյէն շատ անառ՝ աւերուեց. առաջին անգամ խօջա Բեշլը՝ Պարսկաստանի թագաւորից, օրին պատմագիրները կոչում են Գրեղան, որովհետեւ նա ապստամբել էր եւ զենք էր վեր

առեւ այդ թագաւորի դէմ՝ ապա Թիմուրլենկը աւերեց: Խոմսէլ Սօֆիի նախորդները, սկսեալ Տիմուրլենկի 700 թուականից, այն է 1300ից, մի քանի ժամանակ այդտեղ հաստատեցին իրանց բնակութիւնը՝ եւ առում են, որ մի քանի դար առաջ, Հայաստանի վերջին թագաւորներն այդտեղ էին հաստատել իրանց արքանիքը եւ նրանց ժամանակի շորս Տարիւրից աւելի եկեղեցիներ կային: Այդ եկեղեցիների շատերի աւերակներն գեո. առնուած են, բայց ամբողջ մնացած մի հաս չկայ, եւ ոչ եւս մի հաս քրիստոնէայ ե բնակուած այդտեղ¹:

Մի այլ հեղինակ Ալամ Օլէարիսս, որ ճանապարհորդեց Պարսկաստան 1633—1639 թուին՝ ուրեմն շարգէնից առաջ, ահա ինչ է գրում:

“Սուլթանիէ քաղաքը հեռուից շատ գեղեցիկ է երևում” մի քանի սրուն շինութիւնների, բազմութիւ դանդախականների՝ եւ մեծ սիւնների պատճառով, բայց ներքից բոլորովին անապառ է, եւ բոլոր պարիսպները քանդուած են: Առաջ, նա Պարսկաստանի ամենամեծ եւ գեղեցիկ քաղաքներից մինչ էր եւ կէս միոնից աւելի երկայնութիւն ունէր, որուն շէնքներն այսօր էլ տեսնուած են Համադանի ճանապարհի վրայ, քաղաքից կէս միոն հեռու, մի աշտաբակուոր գաւառի վրայ, որ ըստ անտիգութեան քաղաքի գաւառ է եղել:

“Սուլթան Մահմէդ խոջաբէնը, երբ միացրեց Հնդկաստանի, Ուզբէկների եւ Թիւրքիայի մի մասն իր պետութեան հետ, հին Տիւրանիէր քաղաքի աւերակներով շինեց այդ քաղաքը, եւ դորինից իր կայսրութեան մայրաքաղաքը: Խոջա Ռէշիդ, Պարսկաստանի թագաւորը, որին Յովսէփ Բարբարուսը (Jos. Barbarousse) անուանում էր Գիւլամ², քանդեց Սուլթանիէ քաղաքը բնակիչների ապստամբութեան պատճառով, իսկ լէնկիթի մօր բոլորովին կործանեց, ամենադեղեցիկ շինութիւնն այժմ մի մզկիթ է, ուր գտնուած է խոջաբէնի գերեզմանը. նա երեքդաններ է եւ ամենեւեւ անաղից կամ պղծից չէ շինուած, ինչպէս տեսնում է Բիդարիսը, այլ յիշուած պողպատից: Այդ քաղաքը այժմ 6000 բնակիչ ունի³:

Անձամբ կամենալով ստուգել այդ իրողութիւնը, ես մի քանի անգամ Թեհէրանի գնալիս, երբ իջեանել եմ համանուն Սուլթանիէի գիւղում, հետազոտութիւններ եմ կատարել: Բազմաթիւ աւերակները, մինչեւ այսօր դեռ կանգուն մնացած, թէեւ կիսաւեր, հռչակաւոր “Սուլթանիէ” մզկիթը, լայնատարած եւ ահագին շրջակայ դաշտերը, թուրք բնակիչների աւանդութիւնը՝ թէ յառաջ Սուլթանիէի բնակիչները քրիստոնէայ են եղել, վեր-

ջապէս տեղացիների հաստատմամբ, աւերակների մէջ խաշքարներ եւ այլ քրիստոնէական նշաններ գտնելը — այդ բոլորը ցոյց է տալիս, որ Սուլթանիէն՝ արդարեւ՝ մի ժամանակ հզոր եւ մեծ քաղաք է եղել, որի բնակիչների մեծամասնութիւնը քրիստոնէաներ են եղել: Այդ մասին մինչ ունիք եւ մի աւելի հաստատուն պատմական փաստ: Մեզ յայտնի է, որ 1330 թուին, Հոռոմի Պապը, Սուլթանիէ քաղաքի արքեպիսկոպոս Նշանակեց Յովհաննէս Կոր առնուով եկեղեցականին (Jean de Cor): Արքեպիսկոպոսական թագաւոր հաստատելը մի քաղաքում՝ ցոյց է տալիս, որ քրիստոնէաների մեծ բազմութիւն պէտք է լինէր այդտեղ: Այդ քրիստոնէաները Հայ էին, որոնց մի մասը՝ երեւի Ունիտորների ջանքերով՝ ընդգռնեցին կաթոլիկականութիւն:

Երեւում է նշնպէս, որ Հայեր եղել են նաեւ հռչակաւոր Ռէյ քաղաքում: Ըսիայի այդ ամենահռչակաւոր քաղաքի մասին, որի աւերակներն այսօր գտնուած են Թեհէրանի մօտ, պատմագիրները հրաշայլք են պատմում: Իննեւորդ դարում Ռէյ քաղաքը ուներ 96 թաղ, իւրաքանչիւր թաղ ուներ 46 փողոց իւրաքանչիւր փողոց — 400 տուն եւ 10 մզկիթ: Կար 6400 դարդը, 16.600 բաշիք, 15.000 աշտարակ, 12.000 ջրղար, 17.000 իրանցք, 13.000 քարմանսարայ, Մեծ շահապաշու քաղաք էր, եւ կոչւում էր “Տիեզերքի վաճառատունը”,¹ ուստի եւ անկասկած է որ այդտեղ Հայերի մեծ բազմութիւն պէտք է լինէր: Ռէյը կործանուեց ԺԱ. եւ ԺԲ. դարում Թաթարներից:

Պարսկաստանի Հայերի ծագման, ուրեմն եւ ԺԲ. դարի մեծ գաղթականութեան պատմութիւնն աւանդել է մեզ յետագաներիս Ուռքէլ Պարդապետ Պապիոսեցին, որ իր պատմութիւնը գրել է 55 տարի յետոյ: — Առաքել Պարդապետը, բնիկ Դավթիթեցի՝ որի ցեղը մինչեւ այսօր եւս յարստեւում է այդ քաղաքում, իշխանի միաբան էր: Հայոց ՌՃ, այսինքն՝ փրկչական 1651 թուին՝ Փիլիպպոս Կաթոլիկոսի հրամանով սկսեց գրել իր ժամանակի անցքերի պատմութիւնը եւ շորս տարի աշխատելով՝ բաց թողեց, բայց այդ կաթոլիկոսի մահից յետոյ, յաջորդ Յակոբ հայրապետի ստիպմամբ դարձեալ ձեռնարկեց այդ

¹ Արգեթ Օլէարիսսի ժամանակ գեո. կանգուն էին եկեղեցիների դանդախականները, թե՛ զանգակաւան առեւով հաւանութեւն է միաբանները, չգիտեմք, հաւանութեւն է վերին երեքագոթի: Նշել:

Ժամ. թարգմ.

² i Nouvelles Annales des Voyages par V. de S.-Martin. Paris 1852, Octobre.

գործին եւ աւարտեց իր պատմութիւնը 1662 թուին:

Այդ պատմութիւնն ամբողջում է իւր մէջ վաթնամեայ մի շրջան, այն է 1601ից մինչ 1662 թիւը: Կրա մէջ հաղորդուած փաստերին մեք պէտք է ամենայն վստահուա լեմամբ հաւատ ընծայենք, որովհետեւ ինքը թեմամեզիլը կամ ահնատեսն է եղել կամ լսել է ահնատեսներէից: Այդ պատմութիւնը տպուել է անմիջապէս իր վերջնաւորոց 7 տարի յետոյ, այն է 1669 թուին, չորսնգայի վստահեղամ քաղաքում՝ Ոսկան Վարդապետի ձեռնով:

Մյուս քաղաքականությունը սկսուեց 1586 թվին եւ կատարուեց 1604—1605 թվին, այսինքն մեզանից շինչ 292 տարի առաջ: Գարձեալ մի անգամ եւս թշնաւահ Տայ ազգը կորստեան անդրեւին ժամեցան, գարձեալ մի անգամ եւս Տայ ազգը զգաց, որ իր գլխին ծանրացել է Ղախախնամութեան աղը եւ Տաւեթ է իր վերջին օրը, կարծես երկնային եւ երկրային բոլոր ոյժերը — սով, ժանտախ, Տուր, սուր եւ թուր մտղովորըքը ջնջելու եւ բառնալու երկրիս երեսից . . . ։ Բայց յառաջ մեզ Տարկուոր է մի որոշ գաղափար տալ այն ժամանակաւորաւ զաղաքական գործութեան եւ Հայաստանին վիճակի մասին, որպէս զի գաղղթականութեան պատճառն անհետեւ լինի:

$$(Z = F^* - 2m\{t, t\} :)$$

Է. ԱՌԱՔԵԼԵԱՆ



ԵԳԻՍՏԻՆԻԹԱՆԳԱԼՍԵՑԻՔ՝ ԵՒ ՇՈՎՍԷՓ ԿՈՇՈՅԵՐ
ՆՈՐ ՀՐԴՎԱՐՏԱԿԸ

$$(2\pi r = 2\pi \cdot \frac{1}{2} = \pi)$$

Չանցաւ երկու տարի՝ վերջ յիշուած առանձնաշնորհութեան պատճէնին վրայ՝ եղև սարեթուպովս ազգայինք Յովսէփ Կոյսեր դէմէլով, երկրորդ արամուութեան թուրք մըն ալ ընդունեցան 1786 գեհա, 27ին, — որով եղևսարեթուպովին՝ ամէն ուրիշ օգտաւ թագաւորական քաղաքաց կարգն ընդունեցաւ աւանդաւ:

Աս առանձնաշնորհութեան պատճէնին մէջ գովութեամբ յիշուելէն ետեւ Եղիսաբեթու պոլսեցոց աւիրոնց պապերուն հաստատումութիւնն ու հաստատարիմ ծառայութիւնը, զոր ըրին տէրութեան, այն միտցին երբ ասիկայ

Հարկաւորութիւն ունէր իրենց նւթական օգնութեանը — կը նորոգուէին այն ամէն իրաւունքներն, արտօնութիւններն ու առանձնաշնորհութիւնները զորոնք ընդունեցաւ քաղաքը կայսեր պապերէն:

Ըսկից զատ՝ կը արուի Նիդսամիթուպո-
սոյ 1. Հասասար իրաւունք ամէն հուշա-
րական ազատ թագաւորական քաղաքացի հետ:
Կը չնորհուի որ տեւորական ւաւագածողովի
կանչուի՝ արընտանիս պատճենի ձեռքը եւ հոն
կատարածնիստ ու քուէ ունենայ: — 2. որ կա-
լուածատեւորութեան մէջ՝ դրանսիւրանիոյ օրի-
նաւոր իշխանէն զատ՝ ուրիշ տէր չճարնայ: —
3. որ քաղաքացիները՝ ճշմարիտ ու անտարակու-
սելի աշխուրհական համարաբոլին. — որ երես-
նեակ վճարելէն ազատ ըլլան. իսկ հասարակ
քաղաքացիները՝ ունենալով ձեռուքնէն քաղքին
անցադիրն՝ ամէն մարտի եւ արդը վճարմանէն
ազատ ըլլան: 4. թէ ամէն օտար, որ Նիդսա-
րիթուպոսոյ մէջ իրելիր ունի, — ըլլայ ազատ
քաղաքացի կամ՝ արեւուական՝ քաղքին տուրք
աւար: Է: — 5. թէ արտօնացեալ ըլլայ դե-
նուորայ տեղ ու բնադութիւն տալէն եւ նախ-
ամուրքի ծառայութենէն: — 6. թէ քաղաքն
պատառութեամբ կարենայ դատարան եւ իր
պաշտօնականներն ընտրել. եւ տունը՝ օրինա-
յաջմանին մէջ կարենան դատաստան ընել: Բայց
թող տալու էն որ ուզողները — խնդիրն աւելի
ծանր կեղծով քննելու համար — բարձրագոյն
անեմին կարենան դիմել: — Կը տուի դար-
ածալ քաղքին լիակատար իշխանութիւն 7. որ
իրեն սահմանին մէջ բնութեւ չարա-
գործները կարենայ կառաքնատել եւ կախա-
ղան հանել: — 8. որ անծառնաճ մնացողներուն
թէ՛ շարժական եւ թէ՛ անշարժ ստացուածները
քաղքին անցնին: — 9. որ քաղաքացիները
տներն ու երկիրներն անմաւաչելի ըլլան. եւ այլն:

Տեսնենք այս կայսերական պատճենին
Հայերէն Թարգմանութիւնը.

“Մենք Յովսէփ երկրորդը, որդւմութեամբն Աստուծոյ միշտ գերազդն եւ ընտրեալ ժաւանգական Հռոմկայան կայսր, Թագաւոր Գերմանիայ, Հունգարիոյ, Պոնտիֆիկայի, Գաղմաստիայի, Խառաքատանի, Սլաւոնիայի, Կալցիցիայի եւ Խոսովիցիայի եւն են:

Ինչպէս որ մեր խնամօրէն հօգատարութեանը կը վերաբերի, որ բարձրագոյն իշխանութիւնէն մեզի յանձնուած երկիրներուն եւ գաւառաց լատութիւն յառաջացընենք, բարձրութիւն անցընենք եւ հասարակաց բառոյն